ML MINING

ՄԼ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ
21/3 Ն.Ադոնց փող, Երևան, ՀՀ

ML MINING LLC
21/3 N.Adonts str, Yerevan, RA

~~14 փետրվար 2025թ.~~
17.12.25թ

N 593

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար պարոն Ս. Աթանեսյանին

Հարգելի պարոն Աթանեսյան

«ՄԼ Մայնինգ» ՍՊ ընկերությունը 2024 թվականի ապրիլի 16-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացել է ՀՀ Արարատի մարզի Արտաշատի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասի հարակից տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման թիվ ԵՀԹ-29/397 թույլտվությունը:

Համաձայն Պ-397 պայմանագրի 4.4 կետի 4.4.11 ենթակետի և ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի թիվ 191-Ն որոշման հիման վրա՝ ընկերությունը պարտավորվել է իրականացնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման մշտադիտարկումներ:

2024 թվականի աշխատանքների ընթացքում կատարվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ;
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ :
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով արտադրական տեղամասի տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:
4. Արաքս գետի ջրերի նմուշարկում աշխատանքների ընթացքում յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ պղտորության ուսումնասիրության նպատակով ;
4. կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն:

Ներկայացնում եմ իրականացված մշտադիտարկումների արդյունքները:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն Է. Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք No Ը-17655
«17» 12 2025 թ.

(+374) 10 200 004 mlmining.am mlmining@mail.ru